ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ **2.1**

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

/քննության հարցեր/

ՀՈՒՆԻՍ **2021**

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները չունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են.

ա/ տնտեսական ընկերակցությունները և հասարակական միավորումները
բ/ տնտեսական ընկերությունները և հիմնադրամները
գ/ հիմնադրամները և հասարակական միավորումները
դ/ տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները

2. Իրավաբանական անձի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելիս չորրորդ հերթին մարվում է.

ա/ աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը
բ/ բյուջե, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող պարտադիր վճարների պարտքը
գ/ այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով
դ/ լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները

3. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը՝ օրենքով վերապահված հարցերը.

ա/ չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմինների իրավասությանը, եթե այլ բան ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ
բ/ չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմինների իրավասությանը
գ/ կարող են նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմինների իրավասությանը, եթե դա նախատեսված է ընկերության կանոնադրությամբ
դ/ կարող են նրա կողմից փոխանցվել ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի իրավասությանը

4. Ընկերությունը, որի մասնակիցները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով կոչվում է.

ա/ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն
բ/ լիակատար ընկերակցություն
գ/ վստահության վրա հիմնված ընկերակցություն
դ/ բաժնետիրական ընկերություն

5. Կոոպերատիվի անդամի անձնական պարտքերի համար նրա փայի վրա բռնագանձում տարածել թույլատրվում է.

ա/ առանց որևէ պայմանի
բ/ միայն կոոպերատիվի մյուս անդամների գրավոր համաձայնության դեպքում
գ/ միայն կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի որոշման առկայության դեպքում
դ/ միայն այդ պարտքերը մարելու համար նրա այլ գույքի անբավարարության դեպքում

6. Եթե տարասեռ գույքի տարրերը կազմում են ընդհանուր նշանակությամբ իրենց օգտագործումը ենթադրող միասնական ամբողջություն, ապա դրանք դիտվում են որպես.

ա/ անբաժանելի գույք
բ/ բաղադրատարր գույք
գ/ գլխավոր գույք
դ/ անհատապես որոշվող գույք

7. Արժեթուղթը.

ա/ սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է
բ/ սահմանված ձևի գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս
գ/ սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս
դ/ սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային և ոչ գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս

8. Կողմերի համաձայնությամբ պայմանագրի հիման վրա անշարժ կամ շարժական գույքը, որը կարող է ծանրաբեռնվել այնպես, որ անձը, հօգուտ որի կատարվել է այդ ծանրաբեռնումը, իրավունք ունենա տիրապետելու և օգտագործելու գույքը և դրա օգտագործմամբ ստացվածը (պտուղներ, արտադրանք, եկամուտներ) նույն կերպ, ինչպես դա իրավասու կլիներ անելու գույքի սեփականատերը, կոչվում է.

ա/ ուզուֆրուկտ
բ/ անձնական սահմանափակ սերվիտուտ
գ/ կամավոր գույքային սերվիտուտ
դ/ հարկադիր գույքային սերվիտուտ

9. Շինծու է համարվում այն գործարքը, որը.

ա/ նոտարական կարգով վավերացված չէ
բ/ կնքվել է գործունակ, սակայն գործարքի կնքման պահին այնպիսի վիճակում գտնվող քաղաքացու կողմից, երբ նա ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք
գ/ կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության
դ/ կնքվել է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով

10. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) կնքած գործարքը.

ա/ անվավեր է
բ/ առոչինչ է
գ/ դատարանով կարող է ճանաչվել անվավեր
դ/ առոչինչ է, եթե կնքվել է առանց իր ծնողների, որդեգրողների, հոգաբարձուի կամ խնամակալի համաձայնության

11. Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը.

ա/ չի սահմանափակվում
բ/ մեկ տարի է
գ/ երեք տարի է
դ/ հինգ տարի է

12. Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած.

ա/ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով
բ/ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը
գ/ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը
դ/ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

13. Համալիր թույլտվության պայմանագրով կողմեր կարող են լինել.

ա/ առևտրային կազմակերպությունները և կոոպերատիվները
բ/ առևտրային կազմակերպությունները և ոչ առևտրային կազմակերպությունները, եթե վերջիններիս կանոնադրությամբ ուղղակիորեն նշված է այդպիսի գործունեությամբ զբաղվելու մասին
գ/ առևտրային կազմակերպությունները և քաղաքացիները
դ/ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատեր քաղաքացիները

14. Սոցիալական գործընկերության կողմերն են.

ա/ աշխատողները և գործատուները՝ ի դեմս իրենց ներկայացուցիչների
բ/ աշխատողները և ՀՀ կառավարությունը՝ ի դեմս իր ներկայացուցիչների
գ/ գործատուները և ՀՀ կառավարությունը՝ ի դեմս իր ներկայացուցիչների
դ/ աշխատողները և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միությունները՝ ի դեմս իրենց ներկայացուցիչների

15. Գործադուլ հայտարարելու որոշման մեջ նշվում է.

ա/ գործադուլի տևողությունը
բ/ գործադուլի մասնակիցների կազմը
գ/ գործադուլը ղեկավարող մարմինը
դ/ գործադուլի ավարտի տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը

16. Գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ.

ա/ եթե աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ
բ/ եթե աշխատողը գտնվում է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ
գ/ եթե աշխատողը դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս
դ/ ցանկացած ժամանակ

17. Ստորև նշվածներից որ՞ը չի հանդիսանում նպատակային արձակուրդի տեսակ.

ա/ ամենամյա արձակուրդը
բ/ հղիության և ծննդաբերության արձակուրդը
գ/ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը
դ/ հայրության արձակուրդը

18. Եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա.

ա/ պարապուրդի ամբողջ ժամանակահատվածն ավելացվում է աշխատողի ամենամյա արձակուրդին
բ/ պարապուրդի ժամանակահատվածն ավելացվում է աշխատողի ամենամյա արձակուրդին, բայց ոչ ավելի, քան տասը օր
գ/ աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի առնվազն կեսի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը
դ/ աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի առնվազն երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը

19. Իր լիազորությունների շրջանակում հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող այլ փաստաթղթով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ հարկային հսկողություն իրականացվող տարածք կամ շինություն նրա մուտք գործելն արգելելը կամ հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող հարկային հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝ առաջացնում է.

ա/ նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով

բ/ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով

գ/ տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով

դ/ նախազգուշացում՝ քաղաքացիների նկատմամբ և տուգանք՝ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով

20. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ լիցենզավորված անձը.

ա/ իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա

բ/ իրավաբանական կամ ֆիզիկական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա

գ/ իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա

դ/ իրավաբանական կամ ֆիզիկական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա

21. Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած քանի՞ տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը.

ա/ ժամկետը չի սահմանափակվում

բ/ 3 տարի

գ/ 5 տարի

դ/ 10 տարի

22. Նշվածներից ո՞ր պնդումն է ճիշտ.

ա/ օտարերկրյա ներդրումները կարող են ազգայնացվել՝ ՀՀ կառավարության որոշմամբ և լրիվ փոխհատուցմամբ

բ/ օտարերկրյա ներդրումների առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ

գ/ օտարերկրյա ներդրումների ազգայնացման հարցը որոշվում է հանրաքվեով

դ/ պետական մարմինները կարող են բռնագրավել օտարերկրյա ներդրումները

23. Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա.

ա/ ինքը կարող է պահանջել, որպեսզի ներկայացվեն ապացույցներ դրանց իսկության վերաբերյալ

բ/ ինքը կարող է պահանջել, որպեսզի ներկայացվեն ապացույցներ դրանց իսկության վերաբերյալ՝ ամբողջությամբ փոխհատուցելով դրա հետ կապված ծախսերը

գ/ ինքը պարտավոր է ինքնուրույն և տեղեկատվություն ներկայացրած անձի հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար

դ/ ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար

24. Նշվածներից ո՞ր պնդումն է սխալ.

ա/ վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում, եթե վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը շոշափում է պետության կամ համայնքի շահերը

բ/ վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում, եթե վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները

գ/ վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում, եթե ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից

դ/ վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում, եթե վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա

25. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա.

ա/ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է

բ/ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է

գ/ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է

դ/ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է

Ընդամենը 50 միավոր

ԲԱԺԻՆ Բ. ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

<u>Խնդիր 1 /12 միավոր/</u>

«ԿԱՐՃ ԵՌԱԿՑՈՒՄ» ՍՊԸ-ն (Կապալառու) շինարարական կապալի պայմանագրերի հիման վրա իրականացնում է էներգետիկ բնույթի զոդման աշխատանքներ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ընթացքում: «ԴԵԲԵԴԻ ՎՏԱԿ ՓՈՔՐ ՀԷԿ» ՓԲԸ-ն (Պատվիրատու) իր կարիքների նպատակով կնքում է շինարարական կապալի պայմանագիր Կապալառուի հետ՝ հիդրոէլեկտրակայանի խողովակաշարերի զոդման աշխատանքների կատարման նպատակով: Կապալի պայմանագրով նախատեսված է, որ շինարարական նյութերի՝ ներառյալ կոնստրուկցիաների տրամադրման պարտականությունը կրում է Կապալառուն: Կապալի պայմանագրով նախատեսվում է նաև 3 տարի երաշխիքային ժամկետ: Շուրջ 2 տարի տևած 3 մլրդ. ՀՀ դրամ ընդհանուր նախահաշվային արժեքով աշխատանքների ավարտից հետո Պատվիրատուի, Կապալառուի, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների և շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի (տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչների) մասնակցությամբ իրականացված շահագործման և տեխնիկական փորձարկման ստուգման ժամանակ պարզվում և արձանագրվում է, որ Կապալառուն, առանց Պատվիրատուի համաձայնության, որոշակիորեն շեղվել է նախագծային փաստաթղթերի և շինարարական նորմերի պահանջներից: Պատվիրատուն ներկայացնում է իր առարկությունները և նշում, որ այս պայմաններում չի ընդունում Կապալառուի աշխատանքի ամբողջ արդյունքը: Հսկողություն իրականացնող կազմակերպությունները և ընդունող հանձնաժողովը գրավոր փաստում են, որ օգտագործված որոշակի նյութերի, ինչպես նաև կոնստրուկցիաների մի փոքր մասի վատորակ լինելու պատճառով Կապալառուն թույլ է տվել նախագծային փաստաթղթերի և շինարարական նորմերի պահանջներից փոքր շեղումներ, սակայն դրանք չեն ազդել շինարարական օբյեկտի որակի վրա, և այն ենթակա է շահագործման: Կապալառուն, իր հաշվին հրավիրում է մեկ այլ անկախ փորձագիտական խմբի, որպեսզի վերջինս գնահատի թույլ տրված շեղումների ազդեցությունը շինարարական օբյեկտի որակի վրա: Այդ փորձագիտական խմբի եզրակացությամբ ևս հաստատվում է հսկողություն իրականացնող կազմակերպությունների արձանագրած փաստը, որ Կապալառուի կողմից թույլ տրված շեղումները չեն ազդել շինարարական օբյեկտի որակի վրա: Այդուհանդերձ, Պատվիրատուն շարունակում է պնդել և հրաժարվում է ստորագրել աշխատանքի արդյունքի հանձնման-ընդունման ակտը՝ ակտում նշելով իր առարկությունների մասին:

Պատվիրատուն հայցով դիմում է դատարան՝ Կապալառուից պահանջելով իրեն փոխհատուցել վատորակ նյութերի և կոնստրուկցիաների ամբողջ արժեքը՝ 15 մլն. ՀՀ դրամ, զոդման աշխատանքների արժեքը՝ 8 մլն. ՀՀ դրամ, ինչպես նաև իր կրած վնասները (բաց թողնված օգուտը)՝ Պատվիրատուի գնահատմամբ 40 մլն. ՀՀ դրամ, ընդամենը հայցապահանջը՝ 63 մլն. ՀՀ դրամ: Կրած վնասների (բաց թողնված օգուտի) հաշվարկման հիմքերի վերաբերյալ Պատվիրատուն իր կողմից դատարան ներկայացված հայցադիմումին կից որևէ հիմնավորող փաստաթուղթ (ապացույց) չի տրամադրել:

Հարց 1. Հայցի քննության արդյունքում դատարանն ի՞նչ վճիռ (դատական ակտ) կկայացնի՝ կբավարարի, թե՞ կմերժի Պատվիրատուի հայցը: Հիմնավորեք պատասխանը:

/6 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք շինարարական կապալի պայմանագրի էությունը, շինարարությունը նյութերով և սարքավորումներով ապահովելու Պատվիրատուի և Կապալառուի պարտավորությունը: Բնութագրեք աշխատանքները հանձնելու և ընդունելու կարգը, կապալառուի պատասխանատվությունն աշխատանքների որակի համար և որակի երաշխիքի նշանակությունը շինարարական կապալի պայմանագրով:

/6 միավոր/

Խնդիր 2 /13 միավոր/

«ՆՅՈՒ ԴԻԶԱՅՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի (Ընկերություն) կանոնադրական կապիտալը կազմում է 1 մլն. ՀՀ դրամ և բաղկացած է թվով 3 բաժնեմասերից, որոնց սեփականատերերի և վերջիններիս պատկանող բաժնեմասերի արժեքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Բորիս Ամատունի – 450 հազ. ՀՀ դրամ (բաժնեմասերի 450/1000)
Սարգիս Գնունի – 300 հազ. ՀՀ դրամ (բաժնեմասերի 300/1000)
Շահիս Պողոսյան – 250 հազ. ՀՀ դրամ (բաժնեմասերի 250/1000)

Ընկերությունը զբաղվում է նորաոճ կահույքի արտադրությամբ և ինտերիերի ու դիզայնի ձևավորման ծառայությունների մատուցմամբ: Ընկերության արտադրանքի մրցունակությունը բարձրացնելու և արտաքին շուկա դուրս գալու նպատակով Ընկերության գործադիր տնօրեն Արշավիր Սիմոնյանը բանակցություններ է վարում ՀՀ-ում կահույքի բազմապրոֆիլ արտադրանք թողարկող սարքավորումներ մատակարարող կազմակերպությունների հետ՝ լավորակ և ժամանակակից պահանջներին համապատասխանող սարքավորում ձեռք բերելու նպատակով: Ստացված առաջարկների և շուկայական գների համադրության արդյունքում կատարված ամփոփմամբ գործադիր տնօրենը ֆիքսում է, որ սարքավորման միջին շուկայական գինը կազմում է շուրջ 50 մլն. ՀՀ դրամ: Այս կապակցությամբ Արշավիր Սիմոնյանը տեղեկացնում է Ընկերության սեփականատերերին՝ նշելով, որ ներկայացված լավագույնը տարբերակը «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ԲԲԸ-ի կողմից տրված 57 մլն. ՀՀ դրամ արժողությամբ “SIEMENS” ապրանքանիշի սարքավորման առաջարկն է: Այս կազմակերպության տնօրենների խորհրդի նախագահը հանդիսանում է Ընկերության բաժնեմասերի 250/1000 մասի սեփականատեր Շահիս Պողոսյանի ամուսինը: Գործադիր տնօրենի կողմից հրավիրված Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի ժամանակ Ընկերության մասնակիցներ Սարգիս Գնունին և Շահիս Պողոսյանը կողմ են քվեարկում գործարքի կնքմանը, իսկ Բորիս Ամատունին՝ դեմ: Բորիս Ամատունին իր կողմից գործարքի կնքմանը դեմ քվեարկելու որոշումը հիմնավորում էր նրանով, որ առաջարկվող գինը շուկայական գինը գերազանցում էր շուրջ 30 տոկոսով, և նա համոզված էր, որ նույն ապրանքանիշի սարքավորումն այլ մատակարարներից հնարավոր է գնել 40-45

մլն. ՀՀ դրամով: Ընկերության գործադիր տնօրեն Արշավիր Սիմոնյանը, արձանագրելով, որ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը մասնակիցների ընդհանուր ձայների մեծամասնությամբ (բաժնեմասերի 550/1000 մասի) որոշում է կայացրել գործարքի կայացման վերաբերյալ, կնքում է սարքավորման գնման համապատասխան պայմանագիր «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ԲԲԸ-ի հետ: Ընկերության բաժնեմասերի 450/1000 մասի սեփականատեր Բորիս Ամատունին վիճարկում է գործարքի կնքման փաստը և առաջարկում անվավեր ճանաչել կնքված պայմանագիրը, սակայն իր առաջարկությունը հավանության չի արժանանում Ընկերության մյուս մասնակիցների և գործադիր տնօրենի կողմից: Գործադիր տնօրենը հանձնարարում է Ընկերության հաշվապահին՝ կնքված պայմանագրին համապատասխան կատարել սարքավորման ձեռքբերման գնի 100 տոկոսի չափով կանխավճար «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ԲԲԸ-ին:

Իր իրավունքների իրացման և Ընկերության շահերի պաշտպանության նպատակով Բորիս Ամատունին հայց է ներկայացնում դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել կնքված գործարքը և պարտավորեցնել «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ԲԲԸ-ին՝ Ընկերությանը հետ փոխանցել գործարքով ամբողջ ստացածը և վճարել տոկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված չափով:

Հարց 1. Ինչքանո՞վ են հիմնավոր և փաստարկված Ընկերության մասնակից Բորիս Ամատունու պնդումները: Հայցի քննության արդյունքում դատարանն ի՞նչ որոշում կկայացնի: Հիմնավորեք պատասխանը:

/9 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շահագրգռվածության առկայությամբ գործարքներ կնքելու կարգը, դրա չպահպանման հետևանքները և գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց շրջանակը:

/4 միավոր/

Խնդիր 3 /15 միավոր/

«ՔԱՂՑՐ ՁՈՂԻԿՆԵՐ» ՓԲԸ-ն (Ընկերություն) գործունեություն է իրականացնում հացաբուլկեղենի և հրուշակեղենի արտադրության և մանրամեծածախ ոլորտներում: Ընկերության հիմնական արտադրատեսակները վաճառվում են սուպերմարկետներում, իսկ վաճառքների զգալի մասը (շուրջ 70 %-ը) բաժին է ընկնում “BEST” սուպերմարկետների ցանցին: “BEST” սուպերմարկետների ցանցի բոլոր խանութներին հարակից տարածքներում միևնույն նոր սուպերմարկետների ցանցի շուկա մուտք գործելու հետևանքով “BEST” սուպերմարկետների ցանցի հաճախորդների ստվար զանգվածը սկսում է օգտվել նորաբաց սուպերմարկետների ցանցից, որտեղ ապրանքների գներն անհամեմատ ավելի մատչելի են, ընդ որում՝ այդ սուպերմարկետներն ինքնուրույնաբար սեփական արտադրանքի հաշվին ամբողջապես ապահովում են անհրաժեշտ հացաբուլկեղենի և հրուշակեղենի պահանջարկը՝ ապահովելով շուրջ 20 տոկոսով ավելի ցածր վաճառքի գներ: Այս փաստն էական ազդեցություն է թողնում Ընկերության վաճառքի ծավալների նվազման վրա: Արդյունքում Ընկերության վաճառքի և մարքեթինգի թիմը ձեռնարկում է լայնածավալ վաճառահանման միջոցառումներ՝ կորցրած շուկան վերականգնելու նպատակով, սակայն շուկայի հագեցվածության պատճառով վերջիններիս հաջողվում է վաճառքների ցուցանիշն ավելացնել միայն 5%-ով: Ընկերության գործադիր տնօրենը դիմում է Ընկերության խորհրդին՝ բյուջեում և հաստիքացուցակում առաջարկվող փոփոխությունները հաստատելու նպատակով: 2021 թվականի հունիսի 10-ին Ընկերության խորհուրդը որոշում է կայացնում՝ առկա թվով 45 աշխատատեղերի (առավելապես՝ հացթուխներ, խմորահունցներ, արտադրամասի բանվորներ և վարորդ-առաքիչներ), որոնցում համալրված աշխատակիցների հետ առկա են անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրեր, թիվը մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը կրճատել և դարձնել 21: Հիմք ընդունելով Ընկերության խորհրդի որոշումը՝ գործադիր տնօրենն իջեցնում է համապատասխան հանձնարարական մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետին, որպեսզի վերջինս ապահովի աշխատանքից ազատման ենթակա աշխատակիցների գծով անհրաժեշտ փաստաթղթերի (ազատման հրամանների) կազմման գործընթացը և աշխատողների հետ վերջնահաշվարկ կատարելու նպատակով հաշվապահության հետ հաղորդակցումը: Հանձնարարականին կցվում է խորհրդի որոշման պատճենը՝ աշխատակիցներին տեղեկացնելու նպատակով: Գործադիր տնօրենի 2021 թվականի հուլիսի 20-ի ազատման հրամաններով Ընկերության թվով 24 աշխատակիցներն ազատվում են աշխատանքից՝ ստանալով հուլիս ամսվա (հաշվարկված՝ մինչև ազատման օրն ընդգրկող աշխատանքային օրերի և հուլիս ամսվա ընդհանուր աշխատանքային օրերի համամասնությամբ) համար աշխատավարձ և հատուցում ազատման օրվա դրությամբ չօգտագործված ամենամյա արձակուրդային օրերի դիմաց: Ազատման օրվանից հետո 3 ամիս հետո, աշխատանքից ազատված աշխատակիցները միասին որոշում են դիմել իրավաբանական խորհրդատվության, որպեսզի համոզված լինեն, որ իրենց աշխատանքային իրավունքները որևէ կերպ չեն խախտվել: «ՔՈ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆԸ ԵՍ ԵՄ» հասարակական կազմակերպությունը, որը զբաղվում է աշխատանքային իրավունքը խախտված անձանց իրավական պաշտպանությամբ, լսելով աշխատակիցներին, հատկապես այն, որ անորոշ ժամկետով աշխատանքային իրավահարաբերություններում ներգրավված անձանց ազատման ժամանակ չի հաշվարկվել և վճարվել արձակման

նպաստ, գալիս է այն եզրահանգման, որ աշխատակիցների արձակման նպաստ ստանալու իրավունքը խախտված է, և առաջարկում է վերջիններիս շահերի արդյունավետ պաշտպանության նպատակով դիմել դատարան՝ պարտավորեցնելով Ընկերությանը վճարել աշխատակիցների արձակման նպաստը, տուժանքները, ինչպես նաև չվճարման ամբողջ ժամանակահատվածի համար տոկոսներ:

Հարց 1. Ինչքանո՞վ են օրինաչափ Ընկերության աշխատակիցների շահերի պաշտպանությունն իրականացնող «ՔՈ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆԸ ԵՍ ԵՄ» հասարակական կազմակերպության հիմնավորումները: Հայցի քննության արդյունքում դատարանն ի՞նչ եզրահանգման կգա: Հիմնավորեք պատասխանը:

/8 միավոր/

Հարց 2. Թվարկեք ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքերը:

/3 միավոր/

Հարց 3. Ի՞նչ պարտականություն(ներ) ունի գործատուն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով զանգվածային ազատումների դեպքում:

/2 միավոր/

Հարց 4. Ի՞նչ պատասխանատվություն է առաջանում աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքում:

/2 միավոր/

<u>Խնդիր 4 /10 միավոր/</u>

Անհատ ձեռնարկատեր Ելենա Տեր-Առաքելյանցը (Վարձակալ) գործունեություն է իրականացնում մասուրի հյութերի արտադրության և մեծածախ վաճառքի ոլորտում: Արտադրված հյութերի վաճառքի գործընթացը կազմակերպելու նպատակով նա «ՀՈՒՍԱԼԻ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄ» ՍՊԸ-ի (Վարձատու) հետ կնքում է անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր՝ դրա կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցմամբ: Տևական ժամանակ փոխշահավետ համագործակցությունից հետո, մի օր, հերթական անգամ վաճառքի երթուղի դուրս գալուց 2 ժամ հետո, Վարձատուի ներկայացուցիչ-վարորդ Գենադի Ղուկասյանը, եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով, չկարողանալով ղեկավարել մեքենայի կառավարումը, բախվում է մայթեզրին հարակից հանրային սննդի կազմակերպման վայրում տեղակայված սառնարաններին և կոտրում դրանք՝ օբյեկտի սեփականատիրոջը պատճառելով շուրջ 1.5 մլն. ՀՀ դրամի վնաս: Բարեբախտաբար, վթարի հետևանքով տուժած անձինք չեն լինում: Հանրային սննդի կազմակերպիչը դիմում է Վարձատուին՝ փոխհատուցում ստանալու պահանջով՝ տեղեկացնելով հակառակ դեպքում դատական կարգով փոխհատուցում ստանալու իր մտադրության մասին: Վարձատուի տնօրեն Սերժ Մինասյանցը գրությամբ տեղեկացնում է, որ վթարի ժամանակ իր ընկերությանը պատկանող մեքենան ծառայություններ մատուցելիս է եղել Վարձակալին (տեղափոխել է նրան պատկանող մասուրի հյութերը) և պատճառված վնասի ողջ պատասխանատվությունը կրում է հենց Վարձակալը: Սերժ Մինասյանցը մեկ այլ գրությամբ այս մասին տեղեկացնում է նաև Վարձակալին՝ վերջինս հայտնելով նաև, որ եթե մեկամսյա ժամանակահատվածում չփոխհատուցվի հանրային սննդի կազմակերպչին հասցված վնասը, իրենց միջև կնքված պայմանագիրը կդադարեցվի: Այս գրությանն ի պատասխան՝ Վարձակալը գրավոր հայտնում է, որ իրենց միջև կնքված պայմանագրի բնույթից ակնհայտ է, որ երրորդ անձանց (տվյալ դեպքում՝ հանրային սննդի կազմակերպչին) հասցված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է հենց Վարձատուն: Արդյունքում, կողմերի միջև տևական բանակցություններն արդյունք չեն տալիս, իսկ մեկ ամիս հետո նաև դադարում է նրանց միջև համագործակցությունը: Անհամաձայնությամբ պայմանավորված, հարցի կարգավորման շուրջ Վարձատուն դիմում է դատարան:

Հարց 1. Արդյոք հիմնավոր են «ՀՈՒՍԱԼԻ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄ» ՍՊԸ-ի պնդումները: Ի՞նչ որոշում կկայացնի դատարանը: Հիմնավորեք պատասխանը:

/4 միավոր/

Հարց 2. Որո՞նք են կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցմամբ և առանց դրանց կնքված վարձակալության պայմանագրերի հիմնական տարբերությունները:

/6 միավոր/